ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԺԱՆՆԱ ՊԵՏՐՈՍԻ

ՄԵԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ (BIG DATA) ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻԳ. 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРУТЮНЯН ЖАННА ПЕТРОСОВНА

ТЕХНОЛОГИИ БОЛЬШИХ ДАННЫХ (BIG DATA) В СОВРЕМЕННЫХ ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССАХ И ВОЗМОЖНОСТИ ИХ ПРИМЕНЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է **ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:**

Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Քոչարյան Տիգրան Տոնիկի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների դոկտոր **Դավթյան Վահե Սամվելի**
քաղաքական գիտությունների թեկնածու **Ասրյան Նարինե Վյաչեսլավի**
Առաջատար կազմակերպություն՝ **Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի դեկտեմբերի 4-ին՝ ժամը 14:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հոկտեմբերի 30-ին:

ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена в **Институте философии, социологии и права Национальной Академии Наук Республики Армения.**

Научный руководитель:
доктор политических наук, профессор **Кочарян Тигран Тоникович**

Официальные оппоненты:
доктор политических наук **Давтян Ваге Самвелович**
кандидат политических наук **Асрян Нарине Вячеславовна**
Ведущая организация: **Государственный университет имени В. Я. Брюсова**

Защита состоится 4-ого декабря 2026 г. в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Ал. Манукяна, 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 30-ого октября 2026 г.

Научный секретарь
специализированного совета 056 МОНКС КВОН РА, кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Չորրորդ արդյունաբերական հեղափոխության ժամանակաշրջանում տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) աննախադեպ առաջընթացն էապես փոխում է քաղաքական համակարգերի գործունեության տրամաբանությունը: Այս համատեքստում մեծ տվյալների (big data) տեխնոլոգիաները դարձել են քաղաքական ինստիտուտների ու գործընթացների զարգացման առանցքային պայման: Դրանք թույլ են տալիս հավաքագրել, մշակել և վերլուծել հսկայածավալ տվյալներ պետական կառավարման, քաղաքական հաղորդակցության, հանրային կարծիքի ձևավորման, ընտրական գործընթացների և այլ կարևոր ինստիտուցիոնալ ոլորտներում՝ նպաստելով քաղաքական ինստիտուտների կայացմանը, քաղաքական գործընթացների թափանցիկությանն ու արդյունավետության բարձրացմանը, քաղաքական որոշումների հիմնավորվածությանը, ինչպես նաև ժողովրդավարական վերահսկողության ամրապնդմանը:

Մեծ տվյալների վրա հիմնված մոտեցումները քաղաքական գործիչների, կուսակցությունների, օրենսդիր ու գործադիր մարմինների համար ապահովում են քաղաքականության մշակման և իրագործման նոր որակ՝ հիմնված տվյալահենք վերլուծությունների, թափանցիկության և մասնակցության վրա: Այս գործընթացները հանգեցնում են քաղաքական ինստիտուտների գործառույթների վերափոխման՝ դրանք դարձնելով առավել ճկուն, հաշվետու և հասարակության պահանջներին արձագանքող:

Մեծ տվյալների տեխնոլոգիաների ուսումնասիրությունը քաղաքական ինստիտուտների և գործընթացների տեսանկյունից ունի թե՛ տեսական, թե՛ գործնական կարևորություն՝ հնարավորություն ընձեռելով բացահայտելու, թե ինչպես են տվյալահենք գործիքները վերափոխում իշխանության բաշխման, որոշումների կայացման, քաղաքական հաշվետվողականության ու հանրային վերահսկողության ինստիտուցիոնալ մեխանիզմները: Ուստի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) թվային օրակարգի շրջանակում մեծ տվյալների տեխնոլոգիաների ներդրումը կարելի է դիտարկել որպես համաշխարհային միտումների տեղայնացում և քաղաքական համակարգի կայուն զարգացման հիմնական պայման:

ՀՀ քաղաքական համակարգում թվային փոխակերպումները, հատկապես պետական կառավարման ինստիտուցիոնալ հիմքերի արդիականացման գործընթացը, դեռևս գտնվում են զարգացման փուլում: Միևնույն ժամանակ մեծ տվյալների տեխնոլոգիաների ներդրումը ՀՀ-ի համար ներկայացնում է ռազմավարական մարտահրավեր, քանի որ այն ոչ միայն տեխնոլոգիական, այլև քաղաքական ու ինստիտուցիոնալ նշանակություն ունի. տվյալահենք գործիքները կարող են ստեղծել նախադրյալներ քաղաքական գործընթացների ժողովրդավարական բնույթի

ամրապնդման, հանրային մասնակցության ընդլայնման, պետական ինստիտուտների նկատմամբ վստահության բարձրացման և կառավարման արդյունավետության աճի համար՝ պայմանավորված թվային դարաշրջանի նոր պահանջներով:

Այս պայմաններում տվյալ թեմայի ուսումնասիրությունը դառնում է առավել քան արդիական՝ նպատակ ունենալով բացահայտելու, թե ինչպես կարող են մեծ տվյալների տեխնոլոգիաները նպաստել ՀՀ-ում քաղաքական գործընթացների թափանցիկության, արդյունավետության և մասնակցության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքական ինստիտուտների կայացմանն ու ժողովրդավարական վերահսկողության ամրապնդմանը: Միևնույն ժամանակ աշխատանքը հնարավորություն է տալիս գնահատելու, թե ինչպիսի ինստիտուցիոնալ և գործընթացային փոփոխություններ են անհրաժեշտ, որպեսզի մեծ տվյալների ներուժը լիարժեք կիրառվի թվային դարաշրջանի քաղաքական համակարգի մարտահրավերներին արդյունավետ արձագանքելու համար:

Թեմայի մշակվածության աստիճանը

Հայաստանյան համատեքստում քաղաքագիտական ուսումնասիրություններում և հայեցակարգերում մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառման թեմայով գիտական ուսումնասիրությունները խիստ սակավ են և ունեն հատվածային բնույթ՝ չնայած թեմայի ակտուալության աճող միտումներին: Տեղական գիտական տիրույթում դեռևս ուսումնասիրված չեն մեծ տվյալների տեխնոլոգիաների քաղաքական կիրառությունների մեխանիզմները, ինչպես նաև դրանց ազդեցությունը քաղաքական գործընթացների թափանցիկության, հանրային մասնակցության և քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահության ձևավորման վրա: Այս խնդրի տեսական և կիրառական շրջանակները դեռևս ամբողջական չեն վերլուծվել քաղաքական գործընթացների կազմակերպման, տվյալահենք կառավարման և քաղաքական որոշումների կայացման համատեքստում: Այսպիսով՝ առկա է տեսական բաց, որը պահանջում է համակարգված և միջգիտակարգային մոտեցում՝ համադրելով քաղաքական և սոցիալական գիտությունների, ՏՀՏ-ների, կառավարման և այլ հարակից ոլորտների դիտանկյունները: Այնուամենայնիվ, հարկ է նաև նկատել, որ տեղական գիտական աղբյուրներում քննարկվել են թվայնացման ընդհանրական գործընթացները և թվային փոխակերպման օրակարգը[1], արդի ՏՀՏ-ների դերն ամենատարբեր

[1] *Տե՛ս օրինակ* **Манукян А.,** Анализ процессов цифровизации деятельности публичной власти в РА: преимущества и возможные риски, *Регион и мир,* 2024, Ереван, №5, 161-165; **Labaki G.,** The digital transformation: From e-government to digital government – A change of paradigm, *Public Administration*, 2021, Yerevan, №2, 44-52; **Manukyan H.,** Toward effective digital transformation supervision: A managerial perspective based on ECB criteria, *Public Administration*, 2024, Yerevan, 2, 97-110:

ոլորտներում, տեղեկատվական հասարակության էությունը[2] և դրա անվտանգային հիմնահարցերը[3], ուսումնասիրվել են էլեկտրոնային կառավարման[4], իրերի համացանցի, արհեստական բանականության ու մեքենայական ուսուցման[5], սոցիալական հետազոտություններում մեծ տվյալների կիրառման առանձնահատկություններին[6] վերաբերելի որոշ հարցեր, որոնց բոլորի հիմքում չնայած ընկած է մեծ տվյալների հայեցակարգը, սակայն այդ ուսումնասիրություններում բաց են թողնվել մեծ տվյալների տեխնոլոգիաների ողջ խորության և ներուժի հետազոտությունները, ինչպես նաև տեսամեթոդաբանական կիրառման առանձնահատկությունները:

Ինչ վերաբերում է քաղաքական համակարգի և ինստիտուտների, ինչպես նաև քաղաքական գործընթացների ուսումնասիրություններին, ապա դրանց էությունը և տեսական հիմքերը հանգամանալից և խորապես ուսումնասիրված են Դեյվիդ Իստոնի, Էլմեր Էրիկ Շատշնայդերի, Ռոբերտ

---

[2] *Տե՛ս օրինակ՝* **Սուքիասյան Հ.,** Տեղեկատվական հասարակության հայեցակարգի ձևավորման տեսական նախադրյալները, *Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու*, 2008, №2, Երևան, 174-179; **Քալանթարյան Է.,** Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը ՀՀ պետական կառավարման համակարգում, *Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու*, 2015, Երևան, 214-225; **Թադևոսյան Ջ., Զաքարյան Մ.,** Հայաստանի հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկա վիճակը և առկա հիմնախնդիրները, *Եվրոպական ակադեմիա գիտական հոդվածների ժողովածու*, 2014, Երևան, 3-13:

[3] Տե՛ս օրինակ՝ **Քոթանջյան Հ., Աթանեսյան Ա.**, Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների ու գերակայությունների վերլուծությունը ՀՀ ազգային անվտանգության համատեքստում, *Հայկական բանակ*, 2016, Երևան, 1, 9-20; **Գրիգորյան Ա.,** Կիբեռանվտանգության տեղն ու դերը տեղեկատվական անվտանգության համակարգում, *Հայկական բանակ*, 2016, Երևան, №1, 48-55; **Քարդումյան Վ.,** Կիբեռանվտանգությունը որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ, *Հայկական բանակ*, 2012, Երևան, №4, 76-82; **Քրաութեր Ա.,** Պետական—մասնավոր գործակցության ռազմավարական կարևորությունը կիբեռանվտանգության ապահովման համատեքստում, *Հայկական բանակ*, 2017, Երևան, №1-2, 93-108:

[4] *Տե՛ս օրինակ՝* **Карамян И.,** Информатизация электорального процесса в контексте формирования электронной демократии (опыт Армении), *Вестник российско-армянского университета*, 2019, Ереван, №2, 74-88; **Аветян А., Арутюнян А.,** Роль информационных технологий в развитии современной системы государственного управления, *Вестник российско-армянского университета,* 2020, Ереван, №2, 85-95:

[5] *Տե՛ս օրինակ՝* **Սուվարյան Յ., Հարությունյան Գ.,** Հանրային կառավարման համակարգում արհեստական բանականության կիրառության հիմնախնդիրներ, *Հայկական բանակ*, 2022, Երևան, №1, 9-22; **Ղազեյան Խ.,** Արհեստական բանականության և մարդկային կապիտալի զարգացման փոխառնչության հիմնախնդիրը արդի աշխարհում, *Հանրային կառավարում*, 2023, Երևան, №2, 25-35; **Абрамова А.,** Новые технологии и их значение в защите персональных данных (Интернет вещей, Искусственный интеллект), *Вестник российско-армянского университета,* 2024, Ереван, №2, 44-52:

[6] **Hunter S., Shapira M.,** The State of Data: Reflections on Using 'Big' and Administrative Data Sources in Social Research, *Journal of Sociology: Bulletin of Yerevan University*, 2022, Yerevan, №2, 28-37, https://doi.org/10.46991/BYSU:F/2022.13.2.028:

Ալան Դալի, Էնդրյու Հեյվուդի[7], ինչպես նաև հայազգի քաղաքագիտական մտքի ժամանակակից ներկայացուցիչներ Էմիլ Օրդուխանյանի, Հայկ Սուքիասյանի[8] և այլոց կողմից: Միաժամանակ, ժամանակակից բարձր տեխնոլոգիական առաջընթացի կարևորությանը և ՀՀ առջև ծառացած մարտահրավերներին գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման համատեքստում, այդ թվում ժողովրդավարական վերափոխումների մերօրյա յուրօրինակ ընկալումներին անդրադարձել են Աշոտ Ենգոյանը, Առնակ Սարգսյանը, Գարիկ Քեռյանը և այլոք:[9] Քաղաքական գործընթացներում, ինչպես նաև քաղաքականության մշակման ու կառավարման մեջ տվյալահենք որոշումների կայացման տեսության կիրառման վրա էական ազդեցություն են ունեցել Հերբերտ Սայմոնը, Զեյնեպ Թյուֆեկչին, Շոշանա Զուբոֆը, Էլի Փերիսերը, Կաս Սանշտեյնը, Դեյվիդ Ռանսիմանը և այլոք:[10] Տվյալահենք որոշումների կայացման գաղափարի զարգացմանը և կատարելագործմանն էապես նպաստել են ամենատարբեր գիտակարգերի ժամանակակից հեղինակների՝ Թոմաս Դավենփորթի, Դանիել Կահնեմանի, Ամոս Տվերսկու, Ջոն Թուքիի, Քելյթոն Քրիսթենսենի, Նեյթ Սիլվերի, Էդվարդս Դեմինգի, Յան Լեկունի, Յոշուա Բենջիոյի, Մայքլ Պորթերի, Ջիմ Քոլինզի և այլոց հայացքներն ու կիրառական աշխատանքները:[11]

---

[7] *Տե՛ս օրինակ՝* **Easton D.,** Systems Analysis of Political Life. *Wiley*, 1965; **Schattschneider E.,** The semisovereign people: A realist's view of democracy in America, *Holt, Rinehart and Winston*, 1960; **Dahl R.,** (a) Polyarchy: Participation and opposition. *Yale University Press*, 1971; (b) On Democracy, 2-nd edition, *Yale University Press*, 2015; **Heywood A.,** Politics. 5th ed., *Palgrave Macmillan*, 2019.

[8] *Տե՛ս օրինակ՝* **Օրդուխանյան Է. , Սուքիասյան Հ. ,** Քաղաքագիտություն, Երևան, *Լիմուշ,* 2016; **Օրդուխանյան Է. ,** Իշխանություն և ընդդիմություն: Քաղաքական խոսույթի վերլուծություն, Երևան, *Լիմուշ*, 2010:

[9] *Տե՛ս օրինակ՝* **Ենգոյան Ա. , Սարգսյան Ա. , Ազատյան Խ. , Ենգոյան Փ. ,** Հայաստանի Հանրապետության առջև ծառացած մարտահրավերները գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման համատեքստում, Երևան, *ԵՊՀ*, 2023; **Քեռյան Գ. , Կոստանյան Ն. ,** Ընտրական ինստիտուտների զարգացման պատմական էվոլյուցիան, *Գիտական Արցախ*, Երևան, 2021, №2, 58-66:

[10] *Տե՛ս օրինակ՝* **Tufekci Z.**, Twitter and Tear Gas: The Power and Fragility of Networked Protest. *Yale University Press*, 2017; Kahneman D., (by Krämer, Walter, 2014), **Zuboff Sh.,** The Age of Surveillance Capitalism: The Fight for a Human Future at the New Frontier of Power. *PublicAffairs*, 2019; **Pariser E.,** The Filter Bubble: What the Internet Is Hiding from You. *Penguin Press,* 2011; **Sunstein C.,** (a) Nudge: Improving Decisions About Health, Wealth, and Happiness. *Yale University Press*, 2008. (b) The Ethics of Influence: Government in the Age of Behavioral Science. *Cambridge University Press,* 2016; **Runciman D.,** The Confidence Trap: A History of Democracy in Crisis. *Princeton University Press*, 2013.

[11] *Տե՛ս օրինակ՝* **Davenport T., Harris J.,** Competing on Analytics: The New Science of Winning. *Harvard Business Review Press*, 2007; **Kahneman D.,** (by Krämer, Walter, 2014), Thinking, Fast and Slow. *Statistical Papers*. 2011; **Tversky A., Kahneman D.,** Prospect Theory: An Analysis of Decision under Risk, *Econometrica,* vol. 47, №2, 1979, pp. 263-291; **Christensen C.,** The Innovator's Dilemma: When New Technologies Cause Great Firms to Fail. *Harvard Business Review Press,* 1997; **Silver N.,** The Signal and the Noise: Why So Many Predictions Fail — but Some Don't. *Penguin Press,* 2012; **LeCun Y., Bottou L.,** et al., Efficient backpropagation. In Neural Networks: Tricks of the Trade, *Springer*, 9-50, 1998; **Bengio**

Մեծ տվյալների գիտական առաջին սահմանումներից մեկը վերագրվում է Դուգլաս Լեյնիին, որը հետագայում գիտական շրջանակներում շրջանառել են և առավել հանգամանալից ուսումնասիրել Ջոնաթան Ուարդը, Սթուարտ Բարկերը, Ֆրենսիս Դիբոլդը, Վիկտոր Մայեր-Շոնբերգերը, Քենեթ Քուքիեն, Ռոբ Կիտչինը, Դանահ Բոյդը, Քեյթ Քրոֆորդը և այլոք:[12]

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան. ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության օբյեկտը ժամանակակից քաղաքական գործընթացներն են մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառման համատեքստում: Ուսումնասիրության առարկան է ՀՀ թվային փոխակերպման օրակարգում ՀՀ քաղաքական գործընթացների վրա մեծ տվյալների տեխնոլոգիաների ազդեցությունը և կիրառման հնարավորությունները:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները. ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության նպատակն է վերլուծել մեծ տվյալների տեխնոլոգիաների դերը ժամանակակից քաղաքական գործընթացներում՝ ընդգծելով դրանց կիրառման հնարավորություններն ու սահմանափակումները ՀՀ թվայնացման ընթացիկ միտումների, ինստիտուցիոնալ խոչընդոտների և ռազմավարական մարտահրավերների համատեքստում, ինչպես նաև ձևավորել տվյալահենք կառավարման ուղղությամբ քաղաքականության բարելավման հիմնարար սկզբունքներ:

Վերոնշյալ նպատակին հասնելու հիմնական քայլերը ձևակերպված են հետևյալ խնդիրների առաջադրման տեսքով.

1. Նկարագրել քաղաքական գործընթացների էությունը, տիպաբանությունը, փուլերը և քաղաքական որոշումների կայացումը որպես քաղաքական գործընթացների առանցքային բաղադրիչ և հանրային քաղաքականության բովանդակությունը ձևավորող գործոն,

---

Y., Learning deep architectures for AI. Foundations and Trends in Machine Learning, Vol 2, №1, 1-127, 2009; **Collins J.,** (a) Built to Last: Successful Habits of Visionary Companies. *HarperBusiness,* 1994; (b) Good to Great: Why Some Companies Make the Leap... and Others Don't. *HarperBusiness,* 2001.

[12] *Տե՛ս օրինակ՝* **Laney D.,** 3D Data Management: Controlling Data Volume, Velocity, and Variety. *META Group*, 2001; **Diebold F.,** A Personal Perspective on the Origin(s) and Development of 'Big Data': The Phenomenon, the Term, and the Discipline, *PIER* Working Paper No. 13-003, 2012; **Mayer-Schönberger V., Cukier K.,** Big Data: A Revolution That Will Transform How We Live, Work, and Think. Eamon Dolan/Houghton Mifflin Harcourt, 2013. **Kitchin R.,** (a) Big data, new epistemologies and paradigm shifts. *Big Data & Society*, Vol. 1, №1, 2014; (b) The Data Revolution: Big Data, Open Data, Data Infrastructures and Their Consequences. *SAGE Publications*, 2014; **Boyd D., Crawford K.,** Critical Questions for Big Data: Provocations for a Cultural, Political, and Ethical Framework. *Information, Communication & Society,* Vol. 15, №5, pp. 662-679, 2012.

2. Վերլուծել տվյալների կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները, հիմնավորել «տվյալ» հասկացության կենտրոնական բնույթը թվային հասարակության հայեցակարգում և ներկայացնել դրա կիրառական նշանակությունը քաղաքական որոշումների կայացման գործընթացում,
3. Տեսականորեն հիմնավորել մեծ տվյալների էությունը, դուրս բերել հիմնական բնութագրիչները և կիրառության ձևերը քաղաքական գործընթացներում,
4. Ուսումնասիրել մեծ տվյալների և դրանց հետ առնչություն ունեցող հիմնական հասկացությունների շրջանակը տեղական գիտական աղբյուրներում քանակական և որակական մեթոդաբանության կիրառմամբ,
5. Ներկայացնել տվյալահենք որոշումների կայացման տեսական նախադրյալները և զարգացման հեռանկարները թվային հասարակության և էլեկտրոնային կառավարման համատեքստում,
6. Առաջադրել մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառման կառուցվածքային քայլերը և նկարագրել դրանց աճող ներուժը արհեստական բանականության և իրերի համացանցի հետ փոխազդեցությամբ,
7. Քննարկել քաղաքական գործընթացներում կիրառելի մեծ տվյալների վերլուծության առավել արդյունավետ մեթոդները,
8. Առաջադրել թվային հասարակության սոցիալական շերտավորման նոր մոդել՝ հիմնված մեծ տվյալների տիրապետման, ըստ այդմ՝ դատակրատական նկատառումների և սոցիալական նոր պայմանագրի սկզբունքների վրա,
9. Առաջադրել համալրված ժողովրդավարության մոդելը՝ որպես քաղաքական գործընթացների նկատմամբ վստահության ամրապնդման և մասնակցության խթանման միջոց,
10. Ուսումնասիրել մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառման և դրանց քաղաքական հետևանքների վերաբերյալ միջազգային փորձը,
11. Բացահայտել քաղաքական գործընթացներում մեծ տվյալների կիրառման տեղական միտումները, հնարավորությունները, ռիսկերն ու սահմանափակումները ՀՀ քաղաքական գործընթացների բարելավման համատեքստում,
12. Ներկայացնել մեծ տվյալների փոխգործելիության ճարտարապետության ձևավորման սկզբունքները ՀՀ թվային փոխակերպման տեսլականի շրջանակում դեպքի ուսումնասիրության մեթոդաբանությամբ,
13. Մշակել ՀՀ թվային փոխակերպման օրակարգի գործուն առաջարկություններ և սկզբունքային դրույթներ՝ քաղաքական գործընթացներում կիրառելի մեծ տվյալների ոլորտի ռազմավարական զարգացման համար:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը. ատենախոսության տեսական հիմքում ընկած են ազգային և միջազգային փաստաթղթեր, ռազմավարություններ, գործողությունների ծրագրեր, բանաձևեր, փորձագիտական եզրակացություններ ու գնահատականներ, տեղական և արտասահմանյան գիտական գրականության աղբյուրներ՝ գիտական հոդվածներ, զեկույցներ, մենագրություններ, միջազգային համաժողովների վերլուծական ամփոփագրեր, միջգիտակարգային հետազոտություններ և վերլուծություններ, միջազգային ֆորումների էլեկտրոնային աղբյուրներ և թվային տվյալների տարբեր հարթակներ:

Տեսական նյութի վերլուծության համար կիրառվել են քաղաքագիտական վերլուծության մեթոդներից համակարգային, կառուցվածքային-գործառնական, դիալեկտիկական, համեմատական, ինչպես նաև սոցիոլոգիական մեթոդները: Ըստ այդմ, քաղաքական գործընթացները դիտարկվել են հասարակական իրականության ամբողջականության տեսանկյունից՝ սերտորեն փոխկապակցված լինելով հասարակական կյանքի այլ բնագավառների հետ: Վերլուծվել են քաղաքական գործընթացներում տեղի ունեցող առաջընթաց և հետընթաց փոփոխությունները, ուսումնասիրվել դրանց մեխանիզմները Չորրորդ արդյունաբերական հեղափոխության լույսի ներքո: ՀՀ-ում մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները համեմատվել են տեխնոլոգիական զարգացման տարբեր մակարդակներում գտնվող մի շարք պետությունների փորձի հետ: Ատենախոսության շրջանակներում կիրառվել են ճանաչողության այնպիսի ընդհանուր տրամաբանական հնարքներ, ինչպիսիք են համակարգերի, գործընթացների և երևույթների վերլուծությունն ու ընդհանրացումը, ռազմավարական տեսլականի ձևավորման նպատակով վերացարկումը և իրավիճակային մոդելավորումը, ինչպես նաև մասնավոր դեպքերի ուսումնասիրության հիման վրա ձևակերպվել են ընդհանուր գաղափարական մոդելներ ինդուկտիվ տեխնիկայի կիրառմամբ, ապա այդ մոդելները կիրառվել են տեսական շրջանակի հիմքով՝ կոնկրետ դեպքերի վերլուծության և դրանց գործնական իրականացումը հասկանալու նպատակով՝ կիրառելով դեդուկտիվ տեխնիկաներ: Ատենախոսության շրջանակներում ընտրված էմպիրիկ մեթոդներն են գիտական գրականության քանակական ու որակական (բովանդակային) վերլուծության և դեպքի ուսումնասիրման մեթոդները: Հետազոտության ընթացքում ընտրված մեթոդներով վերլուծվել են բացառապես բաց աղբյուրներից ստացված երկրորդային տվյալներ, որոնք չեն պարունակել անձնական, փակ կամ գաղտի տեղեկատվություն:

Սույն աշխատանքի շրջանակներում կատարվել է վերջին 15 տարիների տեղական գիտական գրականության թե՛ քանակական, թե՛ որակական (բովանդակային) ուսումնասիրություն՝ պարզելու համար քաղաքական գործընթացներում մեծ տվյալների կիրառման նպատակով հայաստանյան

գիտական գրականության ողջ ներուժը, որակը, պիտանելիությունը, ինչպես նաև արհեստական բանականության տարբեր մոդելների ուսուցանման համար պրակտիկ կիրառելիությունը: Վերջինս ընդգծել է ուսումնասիրվող թեմայի ոչ միայն արդիականությունը և աճող պահանջարկը, այլև գիտական մշակվածության աստիճանը, որն, ի դեպ, մոտ է զրոյի: Վերլուծության մեթոդաբանությունը և քանակական արդյունքներն ամփոփված են **հավելվածում,** իսկ որակական տվյալները արտացոլվել են ատենախոսության տեսական նյութում:

Դեպքի ուսումնասիրությունն ընդգրկել է ՀՀ թվային փոխակերպման գործող ռազմավարության և էլեկտրոնային կառավարման ճարտարապետության տեսլականի, «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի կողմից իրականացվող թվային փոխակերպման օրակարգի և ներկայումս մշակման փուլում գտնվող «Ծառայությունների ազգային հարթակի» շրջանակը: Վերլուծության ժամանակ չեն ներառվել փորձարարական փուլում գտնվող տեղեկությունները, որոնք հասանելի չեն բաց աղբյուրներում:

Ատենախոսության գիտական նորույթը

- Ատենախոսության շրջանակներում առաջին անգամ քաղաքագիտության ոլորտում իրականացվել է ՀՀ համատեքստում մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների համակարգային վերլուծություն՝ որպես թվային փոխակերպման հիմնարար բաղադրիչ և տվյալահենք կառավարման հիմնակետ:
- Ուսումնասիրությունը հստակեցրել է մեծ տվյալների հայեցակարգը, բնութագրերը, աղբյուրները, մշակման մեխանիզմները հասարակական-քաղաքական հարաբերություններում ու գործընթացներում:
- Խորությամբ վերլուծվել են մեծ տվյալների կիրառման դերը և նշանակությունը քաղաքական գործընթացներում՝ կենտրոնանալով փոխգործելի, էթիկապես կարգավորված և հանրային արժեք ստեղծող տվյալային էկոհամակարգի ձևավորման տեսական ու գործնական հնարավորությունների վրա:
- Առաջարկվել է մեծ տվյալների հայեցակարգի դիտարկումը ոչ միայն որպես տեխնոլոգիական գործիք, այլև որպես թվային հասարակության համատեքստում նոր և հզոր քաղաքական ռեսուրս և հանրային բարիք:
- Հանգամանալից վերլուծության են ենթարկվել տվյալահենք կառավարման ինստիտուցիոնալացման միտումներն ու հեռանկարները և դատակրատական մոտեցման համակարգային ռիսկերն ու քաղաքական վտանգները, մշակվել հասարակության սոցիալական շերտավորման նոր մոդելը և նոր սոցիալական պայմանագրի հայեցակարգը, անհրաժեշտությունը և տեսագործնական հիմքերը:

- Առաջին անգամ իրականացվել է «Տվյալահենք որոշումների կայացման» մեթոդաբանական մոտեցման համակարգային վերլուծություն՝ քաղաքական գործընթացների արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով, և ներկայացվել են մոտեցման առանցքային սկզբունքների տեղայնացման մեթոդները՝ ՀՀ պետական կառավարման և քաղաքական ինստիտուտների համատեքստում:
- Մեկնաբանվել են թվային փոխակերպման համատեքստում ձևավորվող «համալրված ժողովրդավարության» սկզբունքները, դրույթները և պրակտիկ կիրառման հնարավորությունները:
- ՀՀ թվային փոխակերպման ռազմավարության հիմքում առաջարկվել է ներդնել «տվյալ-մարդ-տեխնոլոգիա» նոր հայեցակարգային սկզբունքը, կենտրոնական տեղ հատկացնելով մարդու հիմնարար իրավունքներին, սակայն նախ և առաջ շեշտադրելով մարդու կողմից ստեղծվող և ինքնաբերաբար գեներացվող բաց, որակյալ և փոխգործելի թվային տվյալների կարևորությունը:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը

Ժամանակակից քաղաքագիտական մտքի զարգացման պայմաններում շարունակվում են ձևավորվել նոր հասկացություններ և երևույթներ, որոնք դեռևս սահմանազատված և վերլուծված չեն ամբողջությամբ՝ հատկապես հայաստանյան գիտական միջավայրում: Սույն աշխատանքի շրջանակներում լրացվել են այդ տեսական բացերը՝ մի շարք հասկացությունների գիտական շրջանառության մեջ ներմուծման և հիմնավոր ձևակերպման միջոցով:

Գիտատեսական տեսանկյունից ատենախոսության մեջ ներառված գաղափարները, վերլուծությունները, եզրահանգումները և մոտեցումները նպաստում են թվային տեխնոլոգիաների և քաղաքական գիտությունների խաչմերուկում ձևավորվող նորարարական դաշտի առավել խորքային ըմբռնմանը՝ վեր հանելով մեծ տվյալների տեխնոլոգիաների ներուժը՝ որպես թվային հասարակությունում քաղաքական գործընթացների վերլուծության, կանխատեսման, մոդելավորման և որոշումների կայացման գործիք: Ատենախոսության շրջանակում ձևակերպված տեսական եզրահանգումները հարստացնում են քաղաքագիտության և թվայնացման փոխազդեցության վերաբերյալ գիտական դիսկուրսը՝ մասնավորապես ընդգծելով մեծ տվյալների տեխնոլոգիաների դերը ժամանակակից քաղաքական գործընթացներում: Ուսումնասիրությունը լրացնում է գիտական բացը՝ կապված մեծ տվյալների կիրառման հնարավորությունների գնահատման և քաղաքական վերլուծության մեթոդաբանական հիմքերի զարգացման հետ:

Մշակված գործնական առաջարկությունները կարող են ծառայել որպես ուղեցույց ՀՀ թվային փոխակերպման օրակարգի ռազմավարական պլանավորման համար՝ հատկապես շեշտադրելով քաղաքական գործընթացներում մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները: Ավելին, ատենախոսության արդյունքները կարող են

կիրառվել քաղաքական ինստիտուտների և հանրային կառավարման մարմինների թվային վերափոխման ծրագրերում, ինչպես նաև հիմք ծառայել պետական քաղաքականության մշակման, կրթական և մասնագիտական վերապատրաստման ծրագրերի թարմացման, հանրային իրազեկման արշավների մշակման, էմպիրիկ հետազոտությունների նախագծման համար:

Կիրառական տեսանկյունից այն տրամադրում է պրակտիկ խորհուրդներ ամենատարբեր ոլորտներում որոշումների կայացման գործընթացում մեծ տվյալների մոդելների կիրառման վերաբերյալ և գործուն առաջարկություններ ու սկզբունքային դրույթներ թվային օրակարգի ռազմավարական պլանավորման տեսանկյունից: Այս ուսումնասիրության արդյունքները կարող են հիմք ծառայել քաղաքականություն մշակողների, պետական կառույցների, մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության դերակատարների համար՝ տվյալահենք որոշումների կայացման և թվային կառավարման ռազմավարությունների ձևավորման ուղղությամբ: Կատարված ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում ոչ միայն վերլուծելու տեղական ենթակառուցվածքների պատրաստվածության աստիճանը, այլև առաջարկելու ուղենիշներ՝ նպաստելով ՀՀ-ում տվյալահենք քաղաքական մշակույթի ձևավորմանը:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը և հրապարակումները

Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի քաղաքական հետազոտությունների բաժնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթները և արդյունքները հրապարակվել են վեց թեմատիկ գիտական հոդվածներում, զեկուցվել տեղական ու միջազգային գիտաժողովների, մասնագիտական սեմինար-քննարկումների և աշխատաժողովների ընթացքում: Որոշ դրույթներ արտացոլվել են ՀՀ տարբեր ոլորտների իրավիճակային գնահատումներում, զեկույցներում և վերլուծություններում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից իրենց տասնմեկ ենթագլուխներով, եզրակացությունից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 170 էջ է (չհաշված հավելվածը):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում դրա գիտական մշակվածությունը, սահմանվում են ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են տեսամեթոդական հիմքը, գիտական նորույթը, ուսումնասիրության գիտատեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների փորձաքննության, հրապարակումների, ատենախոսության կառուցվածքի մասին տեղեկություններ:

Առաջին գլխում՝ «**Քաղաքական գործընթացների և որոշումների կայացման տեսական հիմնաբանությունը**» վերտառությամբ, համակողմանի հետազոտվել են քաղաքական գործընթացների էությունը և զարգացման հիմնախնդիրները, որոշումների կայացումը որպես քաղաքական գործընթաց, տվյալահենք որոշումների կայացման տեսական նախադրյալները, գիտական շրջանառության մեջ է ներմուծվել և մեկնաբանվել է «դատակրատիայի» գաղափարը և էությունը, քննարկվել են մեծ տվյալների դերը և նշանակությունը քաղաքական որոշումների կայացման գործընթացում: Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Երկրորդ գլխում, որը վերնագրված է **«Մեծ տվյալների դերն արդի քաղաքական գործընթացներում»**, անդրադարձ է կատարվում «մեծ տվյալներ» հասկացության սահմանմանն՝ ապահովելով հայեցակարգային հստակեցումը և ընդգծելով այս տեխնոլոգիաների ինչպես առավելություններն ու զարգացման հնարավորությունները, այնպես էլ գլոբալ մարտահրավերները: Վերլուծվում են մեծ տվյալների տեխնոլոգիական դերը թվային հասարակության համատեքստում, դրանց կիրառումը քաղաքական որոշումների կայացման գործընթացում նոր սոցիալական պայմանագրի համատեքստում, ներկայացվում է «համալրված ժողովրդավարության» հայեցակարգը և մեծ տվյալների փոխգործելիության ապահովման անհրաժեշտ բաղադրիչները: Երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Երրորդ՝ **«ՀՀ քաղաքական գործընթացներում մեծ տվյալների ինստիտուցիոնալ և գործնական դրսևորումները. հնարավորություններ, սահմանափակումներ և զարգացման ուղղություններ»** վերտառությամբ գլխում, դիտարկվում է ՀՀ-ում ընթացող թվայնացման գործընթացների համատեքստում մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառման արդի վիճակը և ՀՀ ինստիտուցիոնալ կարողությունները, սահմանափակումներն ու ռիսկերը, վերլուծվում են ՀՀ քաղաքական գործընթացների տվյալահենք վերակազմակերպումը, վերջապես ձևակերպվում են ՀՀ թվային հասարակության և արդի թվային օրակարգի հիմքում ընկած այն առաջնահերթությունները, որոնք կուղղորդեն ՀՀ-ին հասնելու իր առջև դրված ռազմավարական նպատակներին՝ տվյալահենք որոշումների

կայացման սկզբունքներին համահունչ: Այս գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Ատենախոսության **եզրակացությունում** հանրագումարի են բերվել հիմնական արդյունքները, կատարվել են հայեցակարգային բնույթի եզրահանգումներ ու ընդհանրացումներ, դրանց հիման վրա ներկայացվել են ռազմավարական մի շարք առաջարկություններ:

1. Չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը և արդի տեխնոլոգիական զարգացումները փոխակերպում են մարդկային հասարակությունը՝ տեղափոխելով այն ֆիզիկական տիրույթից դեպի թվային, առցանց և վիրտուալ իրականություն: Հասարակական-քաղաքական գործընթացների բազմաբևեռ և բազմաշերտ թվայնացումը պահանջում է նորարարական ռազմավարական մոտեցումներ և հստակ քաղաքական կամք՝ միաժամանակ ապահովելով հեռանկարային թվայնացման տեսլական և համակարգային կայունություն: Ձևավորվում է թվային հասարակության նոր սոցիալական պայմանագիր, որը կարիք ունի նախ և առաջ լուծելու տվյալների սեփականության, անվտանգության, պաշտպանության, տրամադրման համաձայնության և վերահսկողության հարցերը: Պետական ապարատի թվայնացումը, որը մինչ օրս ընկալվում է որպես պետական փաստաթղթաշրջանառության անալոգայինից դեպի թվային ձևաչափի անցում, էական, սակայն բավարար պայման չէ թվային կառավարմանն անցման համար:

2. Սոցիալ-քաղաքական հարաբերությունների, քաղաքական ինստիտուտների ու գործընթացների ավանդական ձևերը վերաիմաստավորվում են՝ դառնալով ավելի ռացիոնալ, կանոնակարգված և վերահսկելի: Մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառությունը փոխում է քաղաքական գործընթացների բնույթը, հատկապես քաղաքական որոշումների կայացման գործընթացը՝ հնարավորություն ընձեռելով ավելի խորը և բազմակողմանի պատկերացում կազմելու քաղաքացիների նախապատվությունների, մտահոգությունների, ընտրողների վարքագծի, քաղաքական ուղերձների համար թիրախավորման մեխանիզմների, ինչպես նաև հասարակական կարծիքի ձևավորման դինամիկայի վերաբերյալ:

3. Անհատների թվայնացված տվյալները դառնում են նոր թվային հասարակարգի հիմքն ու կառավարման առանցքային ռեսուրսը: Տվյալների ստեղծման, վերահսկման, վերամշակման և օգտագործման հնարավորությունների հիման վրա ձևավորվում է սոցիալական շերտավորման նոր մոդել: Այս բաշխվածությունը թույլ է տալիս բացահայտելու ոչ միայն թվային անհավասարության կառուցվածքային առանձնահատկությունները, այլև մեծ տվյալների շրջանառության և ազդեցության այն կենտրոնները, որտեղ կուտակվում է որոշումներ ընդունելու և համակարգեր ձևավորելու իրական իշխանությունը:

4. Մեծ տվյալները փոխում են իրենց էությունը սոսկ տեխնոլոգիական ակտիվից վերածվելով հանրային բարիքի. մարդակենտրոն քաղաքական կամքի առկայության դեպքում դրանք կարող են ծառայել որպես համընդհանուր օգտագործման արժեքավոր ռեսուրս, որը կնպաստի հիմնավոր քաղաքական որոշումների կայացմանը, հանրային ծառայությունների արդյունավետ մատուցմանը, քաղաքական գործընթացներում քաղաքացիների մասնակցության և վստահության խորացմանը՝ դրանով իսկ ամրապնդելով ժողովրդավարական կառավարման հիմքերը: Մեծ տվյալների՝ որպես թվային հանրային բարիքի մատչելիությունը, հասանելիությունը, արդարացի և հավասարաչափ բաշխումը անկյունաքարային սկզբունքներ են նոր թվային սոցիալական պայմանագրի համատեքստում:

5. Մեծ տվյալների էկոհամակարգը ձևավորվում է անհատական ու ինստիտուցիոնալ մակարդակներում ստեղծվող հսկայական թվային տվյալների համախմբման, փոխգործելիության և վերլուծության միջոցով: Սա հնարավորություն է տալիս իրական ժամանակում արձագանքելու հանրային կարիքներին, քաղաքացիների նախապատվություններին, վարքագծային դրսևորումներին, հստակեցնելու քաղաքական գործընթացների զարգացման միտումները և առաջարկելու օպտիմալ լուծումներ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ սոցիալական ոլորտներում:

6. Թվային փոխակերպման հիմքում առաջարկվում է որդեգրել «տվյալ-մարդ-տեխնոլոգիա» մոդելը՝ կենտրոնական դիրքում պահելով մարդուն և իր բարեկեցությունը, սակայն ի սկզբանե հիմքում ունենալով համակարգային կերպով հավաքագրվող և հենց մարդու շահին ծառայեցվող տվյալները, վերջապես, դրանով իսկ խթանելով տեխնոլոգիական նորարարությունն ու առաջընթացը: Այս մոդելը հնարավորություն կտա մի կողմից պահպանելու քաղաքացու կարիքների և իրավունքների առաջնահերթությունները, մյուս կողմից շեշտադրելու որակյալ և փոխգործելի տվյալների ստեղծումը՝ տեխնոլոգիական գործիքների միջոցով դրանք ծառայեցնելով քաղաքացիների բարեկեցությանը:

7. Մեծ տվյալների տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման և հասարակության վստահության ամրապնդման համար կարիք կա ապահովելու հստակ ձևավորված ինստիտուցիոնալ սկզբունքներ և մեխանիզմներ: Անհրաժեշտ է կարգավորել մեծ տվյալների կյանքի ցիկլի բոլոր փուլերը՝ իրավական շրջանակների հստակեցմամբ և թվային անվտանգության ազգային սկզբունքների տեղայնացմամբ: Մեծ տվյալների վերլուծության գործընթացի և դրանում արհեստական բանականության կիրառման գործիքակազմի կանոնակարգումն ու չափորոշիչների սահմանումը առանցքային են նոր թվային սոցիալական պայմանագրի ձևավորման համար: Տվյալների անվտանգ և պատասխանատու կառավարումը պահանջում է ոչ միայն ինստիտուցիոնալ մեխանիզմների

ներդրում, այլև կիբեռանվտանգության այնպիսի միջոցառումներ, որոնք միաժամանակ կերաշխավորեն անձնական տվյալների գաղտնիությունը և կխթանեն տվյալահենք նորարարությունները: Այս խնդիրն առավել արդիական է այն դեպքերում, երբ տվյալների հավաքագրումը կամ օգտագործումը իրականացվում է հանրային ռեսուրսներով:

8. Մեծ տվյալների նշանակությունը դրանց իմաստավորման և արժևորման մեջ է, երբ տվյալների համատեղ վերլուծությամբ ստեղծվում են օբյեկտիվ, արժեքավոր և կայուն գիտելիքներ: ՀՀ-ում ներկայումս առկա է քաղաքական գործընթացներում մեծ տվյալների կիրառման վերաբերյալ գիտական ու կիրառական հետազոտությունների բաց, որը խոչընդոտում է մեծ տվյալների տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործմանը: Մարդկային կապիտալի խթանումը, մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառման մասնագիտական կարողությունների, պետական աշխատողների թվային հմտությունների շարունակական զարգացումն առանցքային նշանակություն ունեն նոր թվային հասարակության հայեցակարգում: Այս առումով, կարևոր է համաշխարհային փորձի ուսումնասիրությունը և տեղական մասնագիտական ներուժի զարգացումը՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության, հետազոտական ոլորտներում ֆինանսավորման ավելացմամբ:

9. Քաղաքացիների թվային գրագիտության զարգացումն ու իրազեկման մակարդակի բարձրացումը կարևոր նախապայմաններ են՝ ապահովելու նրանց ակտիվ մասնակցությունը, սեփական իրավունքների գիտակցումը և տվյալների օգտագործման հնարավոր ռիսկերի և օգուտների ընկալումը: Այս գործընթացը պետք է լրացվի բաց տվյալների համակարգի ներդրմամբ և մեծ տվյալների ժողովրդավարացմամբ, որը կխթանի հանրային հաշվետվողականությունը, նորարարությունը և վստահությունը պետական կառավարման նկատմամբ: Հանրային իրազեկման արշավները և թվային գրագիտության ու իրավագիտակցության բարձրացման համակարգային միջոցառումները կխորացնեն թվային փոխակերպման օրակարգի հանդեպ քաղաքացիների վստահությունն ու ներգրավվածությունը:

10. Մեծ տվյալների առավելությունները պետք է մշտապես հավասարակշռվեն հնարավոր ռիսկերի, էթիկական խնդիրների, անվտանգային հարցերի և չարաշահումների հնարավորությունների հետ: Հարկավոր է մշտադիտարկել ու գնահատել դրանց ազդեցությունը մարդու իրավունքների, ազատությունների և ժողովրդավարական արժեքների վրա: Տվյալակենտրոն կառավարման՝ դատակրատական մոտեցման ուժեղացման պայմաններում կարևոր է խուսափել բացառապես հավաքագրված մեծ տվյալներով պայմանավորված որոշումների ընդունումից: Մարդու արժանապատվության, ինքնավարության և հասարակական վստահության պահպանումը, ինչպես նաև հանրային քննարկումների և ժողովրդավարական դասական գործընթացների ապահովումը մնում են էական նախապայմաններ քաղաքական համակարգի կենսունակության համար: Առանց որոշումների

կայացման վերահսկելիությունը և հաշվետվողականությունը երաշխավորող համապատասխան մեխանիզմների ձևավորման, մեծ տվյալների վրա հիմնված կառավարումը կարող է հանգեցնել թափանցիկության և ժողովրդավարական պատասխանատվության թուլացման՝ ստեղծելով լեգիտիմության և թվային հասարակության ողջ հայեցակարգի հանդեպ վստահության ճգնաժամ:

11. Ժողովրդավարական արժեքներին համահունչ թվային հասարակության կառուցումը պահանջում է արդյունավետ, թափանցիկ և իրավապաշտպան կառավարում՝ հիմնված պետության, մասնավոր և հասարակական սեկտորների ներդաշնակ համագործակցության վրա: Համալրված ժողովրդավարության իրագործելիությունը նոր հեռանկար է բացում ժողովրդավարական կառավարման համար՝ հնարավոր դարձնելով քաղաքացու մասնակցության խորացումն ու ընդլայնումը թվային տեխնոլոգիաների միջոցով:

12. Տվյալահենք որոշումներն ունեն ժողովրդավարական կայունության և հանրային վստահության ամրապնդման ռազմավարական հիմք դառնալու ողջ ներուժը: ՀՀ-ի թվայնացման օրակարգի բարեհաջող իրականացման համար առանցքային են մեծ տվյալների ազգային պահոցի ստեղծումը և դրա անխափան շահագործումը: Գեներացվող մեծ տվյալների իրական ժամանակում մշակումը և վերլուծությունը չափելի, հետևաբար նաև կանխատեսելի ու կառավարելի կդարձնեն պետության հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական դինամիկ զարգացումը:

13. Ճանաչելով մեծ տվյալները որպես համատեղ ստեղծվող ռեսուրս՝ կարևոր է, որ պետությունը խթանի այնպիսի մեխանիզմների զարգացումը, որոնք կապահովեն այդ տվյալների օգտագործումից բխող տնտեսական և սոցիալական օգուտների հանրային և արդար բաշխումը՝ ի նպաստ քաղաքացիների, համայնքների և ողջ հասարակության: Հետևաբար, կարևոր է խթանել մեծ տվյալների տիրապետման ազգային ռազմավարությունը, ապահովել ներպետական տվյալների մշակման ներուժ, ինչպես նաև մշակել արդար, ներառական և մասնակցային թվային քաղաքականություններ, որոնք կնպաստեն ինչպես քաղաքացիների, այնպես էլ երկրի՝ որպես տվյալների արժևորման լիիրավ շահառուի դերակատարմանը: Բացի այդ, կարևոր է, որ ՀՀ-ն ակտիվորեն մասնակցի և միանա այն միջազգային հռչակագրերին և նախաձեռնություններին, որոնց նպատակն է հստակ սահմանափակել մեծ տվյալների կիրառման հնարավորությունները՝ կանխելու համար դրանց օգտագործումը որպես տոտալ վերահսկողության գործիք, քաղաքացիների անձնական տվյալների շահագործման հիմք կամ որպես պատժիչ մեխանիզմ:

14. Մեծ տվյալների պատասխանատու կառավարումը նպաստում է հանրային ծառայությունների որակի բարելավմանը և հաշվետվողականության բարձրացմանը, քաղաքական գործընթացների թափանցիկությանը և

արդյունավետությանը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Տվյալահենք որոշումների կայացումը և տվյալահենք կառավարումը կարող են առավել արդյունավետորեն բավարարել հասարակական կարիքները ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարներում: Հետևաբար, ՀՀ թվային փոխակերպման նոր ռազմավարության հիմքում պետք է դրվի տվյալահենք որոշումների վրա հիմնված թվային հասարակության կառուցումը՝ ապահովելով կառավարման միանգամայն նոր որակ: Կենսական է դառնում փոխգործելի, էթիկապես կարգավորվող թվային էկոհամակարգերի առկայությունը, որոնցում տվյալների կառավարումը հիմնված կլինի հստակ իրավական, տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ չափանիշների վրա:

15. ՀՀ պետական բոլոր գերատեսչությունների կողմից թվային ծառայությունների նախագծման ստանդարտների պահպանումը, դրանց մշտադիտարկման համար չափելի ցուցանիշների սահմանումը, մեծ տվյալների բազաների շարունակական թարմացումն ու համադրման ապահովումը, փոխգործելիության միասնական ճարտարապետության ներդրումը, և կիբեռանվտանգության ամրապնդումը կարևոր սկզբունքներ են ՀՀ թվային փոխակերպման համատեքստում:

16. Անկախ այն բանից, թե ՀՀ կառավարությունը կնախընտրի ունենալ մեծ տվյալներին ուղղված առանձին ռազմավարություն, թե կինտեգրի մեծ տվյալների քաղաքականությունը ՀՀ թվային փոխակերպման նոր ռազմավարական ծրագրում, այնուամենայնիվ, կարևոր է ուշադրություն դարձնել հետևյալ կառուցվածքային հիմնասյուների վրա՝ հզորացնելով քաղաքական գործընթացներում մեծ տվյալների ա) առաջնորդումը և կառավարումը, բ) ֆինանսական կայունությունը և ներդրումները, գ) ենթակառուցվածքներն ու տեխնոլոգիաները, դ) փոխգործելիությունը և անվտանգությունը, ե) ծառայությունները և հավելվածները, զ) հետազոտական ենթակառուցվածքները և մարդուժի կարողությունները, է) տեղեկատվական համակարգերը և հանրային իրազեկվածությունը: Այս հիմնասյուների զարգացումը կստեղծի վստահելի և բարենպաստ միջավայր հասարակության թվային փոխակերպման օրակարգի շուրջ, մասնավորապես մեծ տվյալների ոլորտի զարգացման, տվյալահենք քաղաքական որոշումների կայացման, քաղաքական գործընթացներում քաղաքացիների մասնակցության և առավել բարձր ներգրավվածության խթանման համար և էականորեն կնպաստի թվային կառավարմանն անխոչընդոտ և հաստատուն կերպով անցում կատարելուն:

Տվյալ ուսումնասիրության արդյունքներից բխող հիմնարար **առաջարկությունները** ներկայացած են ստորև.

1. Կարևոր է ներդնել քաղաքական գործընթացներում տվյալահենք վերլուծության պրակտիկան, խթանել տվալահենք որոշումների կայացման մշակույթը և դարձնել այն պետական կառավարման հիմնական գործիք:

Այսպես հնարավոր կլինի ապահովել քաղաքական գործընթացների ծախսարդյունավետությունը, ներառականությունը, թափանցիկությունը և հաշվետվողականության բարձրացումը: Այս նպատակին հասնելու համար անկյունաքարային է մեծ տվյալների ազգային պահոցի ստեղծումը և դրա անխափան շահագործումը, մեծ տվյալների փոխգործելիության միասնական ճարտարապետության մշակումն ու գործարկումը՝ ապահովելով էթիկապես կարգավորված և հանրային արժեք ստեղծող տվյալային էկոհամակարգ: Դրան զուգահեռ կարևոր է ՀՀ թվային ծառայությունների և մեծ տվյալների բազաների շարունակական թարմացումը, կատարելագործումը և այլ տվյալային համակարգերի հետ ներդաշնակեցումը:

2. Տվյալահենք որոշումների կայացման էկոհամակարգի համար կենսական է մեծ տվյալների ժողովրդավարացումը, ինչը նշանակում է հրապարակային և բաց դարձնել մեծ տվյալների շտեմարանները՝ ապահովելով հասարակական—քաղաքական գործընթացներում դրանց հասանելիության հավասարակշռված կարգավորումները: Բացի այդ անհրաժեշտ է երաշխավորել քաղաքացիական հասարակության մուտքի իրավունքը դեպի այդ բաց շտեմարաններ՝ ստեղծելով մասնակցային վերահսկողության և հետադարձ կապի մեխանիզմներ: Սա ոչ միայն կբարձրացնի տվյալահենք որոշումների թափանցիկությունն ու վստահելիությունը, այլև հնարավորություն կտա գնահատելու և արձագանքելու դատակրատական կառավարման ռիսկերին և չեզոքացնելու քաղաքական գործընթացներում անձնական տվյալների չարաշահման վտանգները, վերջապես կձևավորի քաղաքական ինստիտուտների, մասնավոր ընկերությունների, գիտական հաստատությունների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության նոր փոխվստահելի մշակույթ:

3. Տվյալների ժողովրդավարացմանը զուգահեռ կենսական է կիբեռանվտանգության միջոցառումների և մեծ տվյալների պաշտպանության ստանդարտների ինստիտուցիոնալացումը, անձնական և զգայուն տվյալների գաղտնիության քաղաքականությունների մշակումը, մեծ տվյալների պաշտպանության իրավական և տեխնիկական երաշխիքների ուժեղացումը, կիբեռանվտանգության կենտրոնացված համակարգման արդյունավետ մոդելի մշակումն ու ներդրումը՝ կիբեռմիջադեպերին արագ արձագանքման, սպառնալիքների կանխարգելման և հետախուզական տվյալների փոխանակման մեխանիզմների ապահովման համար:

4. Թվային հասարակությանն անցում կատարելու ճանապարհին հրատապ է թվային գրագիտության կրթության ինստիտուցիոնալացումը բոլոր մակարդակներում, մեծ տվյալների վերլուծության կիրառական հմտությունների զարգացումը բարձրագույն կրթական համակարգում և ներառումը շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերում, հատկապես պետական սեկտորի մասնագետների համար: Կարևոր է բարձրացնել հանրային իրազեկվածությունը թվային տվյալների

օգտագործման հնարավորությունների, առավելությունների և ռիսկերի վերաբերյալ՝ հասարակության լայն զանգվածներին տրամադրելով թվային ծառայությունների և մեծ տվյալների համօգտագործման մասին մատչելի և դյուրըմբռնելի տեղեկատվություն:

5. Կարևոր է խթանել և կոորդինացնել քաղաքացիակենտրոն տվյալահենք նորարարությունները և տեղական թվային ստարտափների ու ՏՀՏ ընկերությունների մասնակցությունը տվյալահենք գործիքակազմի ստեղծմանը՝ հատկապես քաղաքական ինստիտուտների ու գործընթացների տվյալների մշակման ոլորտում, ստեղծել տվյալահենք մշտադիտարկման և շարունակական բարելավման մեխանիզմներ՝ թվային ծառայությունների արդյունավետությունն ապահովելու համար: Այսպիսով, համապարփակ թվային էկոհամակարգի կայուն զարգացումը կխթանի թվային կառավարմանը բարեհաջող անցումը:

6. Համալրված ժողովրդավարության գործնական մոդելների փորձարկումը՝ էլեկտրոնային քվեարկությունների կամ առցանց հանրային քննարկումների ձևաչափով, ինչպես նաև պետական թվային հարթակներից օգտվելիս օգտատերերի փորձառության և գոհունակության գնահատման մեխանիզմների ներդրումը, կնպաստեն թվային ծառայությունների շարունակական լավարկմանը և համապատասխանեցմանը հանրության կարիքներին, պահանջներին ու ակնկալիքներին, վերջապես կբարձրացնեն թվայնացման օրակարգի նկատմամբ հասարակական վստահությունը:

7. Կարիք կա լրացնելու քաղաքական գործընթացներում մեծ տվյալների կիրառման վերաբերյալ գիտական ու կիրառական հետազոտությունների քանակական ու որակական բացը: Քաղաքագիտական ոլորտում մեծ տվյալների տեխնոլոգիաների կիրառման գիտահետազոտական լաբորատորիաների հիմնումը կխրախուսի տվյալահենք ուսումնասիրությունների իրականացումը և կխթանի տեղական փորձագիտական շրջանակի զարգացումը: Առաջարկվող հետագա հետազոտական կարևոր և թիրախային ուղղություններ են ա) քաղաքական գործընթացներում մեծ տվյալների օգտագործման և ժողովրդավարության ամրապնդման միջև ուղղակի կապի հաստատման համակողմանի հետազոտությունները, բ) քաղաքական կառավարման և զանգվածային գիտակցության վրա ազդեցության գործընթացներում մեծ տվյալների տեխնոլոգիաների՝ որպես սոցիալ-քաղաքական զարգացման կառուցողական ներուժի, դրան ուղղված մարտահրավերների ու սպառնալիքների վերաբերյալ խորքային ուսումնասիրությունները, գ) թվային կառավարման նկատմամբ հասարակության վստահության, դ) թվային ծառայություններից օգտվելու քաղաքացիների գոհունակության, ե) անձնական տվյալների պաշտպանության և անվտագության իրազեկվածության վերաբերյալ ուսումնասիրությունները, զ) կիբեռմիջավայրին սպառնացող վտանգների և ռիսկերի շարունակական մշտադիտարկումը և գնահատումը, ինչպես նաև է)

մեծ տվյալների բաց շտեմարանների օգտագործմամբ հասարակագիտական ոլորտի փորձարարական հետազոտությունները՝ բացահայտելու սոցիալ-քաղաքական գործընթացների միտումները քաղաքական իրադարձությունների կանխատեսման հավաստիության, ռիսկերի կառավարման և ապագայի մոդելավորման հեռանկարներում:

8. Հանգամանալից վերլուծելով ՀՀ թվային փոխակերպման գործող ռազմավարությունը, ինչպես նաև ՀՀ տարբեր ոլորտների թվայնացմանն առնչվող պետական մարմինների ծրագրերը՝ ակնհայտ է, որ ՀՀ-ում մեծ տվյալների սեփականության ու համօգտագործման շուրջ կոալիցիոն համաձայնության և միջոլորտային համագործակցության կարիք կա, ինչը պետք է ուժեղացնել և ինստիտուցիոնալացնել: Անհրաժեշտ է կատարելագործել և հստակեցնել մեծ տվյալների ոլորտին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերող օրենսդրությունը, ստանդարտները, կիրառման քաղաքականությունն ու մոդելները՝ ապահովելով համապատասխան իրավական և տեխնիկական երաշխիքներ: Կարևոր են ՀՀ թվայնացման օրակարգի կայուն ֆինանսավորման երկարաժամկետ մեխանիզմների ապահովումը, մեծ տվյալների ոլորտում ուղղակի ներդրումների ավելացումը՝ խրախուսելով մասնավոր հատվածի մասնակցությունը, թվային ծառայություններից օգտվելիս քաղաքացիների, հատկապես խոցելի խմբերի ֆինանսական պաշտպանվածության երաշխիքները, ֆիզիկական և թվային ենթակառուցվածքների զարգացումը, դրանց հասանելիության, մատչելիության և հավասարաչափ բաշխման ապահովումը:

Ատենախոսության հիմնական դրույթները և նորույթ պարունակող եզրակացություններն արտացոլվել են հետևյալ հրապարակումներում՝

1. **Հարությունյան Ժ.,** Էլեկտրոնային կառավարման հասունության մոդելը թվային փոխակերպման օրակարգի համատեքստում, *Գիտական Արցախ*, 2024, №3, Երևան, 71-87, DOI: 10.52063/25792652-2024.3.22-71:
2. **Հարությունյան Ժ.,** Մեծ տվյալների կիրառումն արդյունավետ քաղաքականության մշակման համար, *Հանրային կառավարում*, 2023, №1, Երևան, 260-272:
3. **Հարությունյան Ժ.,** Թվային հասարակության տեսական հիմքերը և զարգացումը չորրորդ արդյունաբերական հեղափոխության համատեքստում, *Գիտական Արցախ*, 2022, №4, 106-107: DOI: 10.52063/25792652-2022.4.15-104:
4. **Հարությունյան Ժ.,** Համալրված ժողովրդավարության կայացման հնարավորությունները արդի տեխնոլոգիական դարաշրջանում, *Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու*, 2022, 167-183:

5. **Հարությունյան Ժ.,** «Մեծ տվյալների» կիրառումը որպես պետության ռազմական համակարգի արդիականացման հնարավորություն, *Հայկական բանակ*, 2020, №4, Երևան, 80-90:
6. **Հարությունյան Ժ.,** Քաղաքական համակարգի փոխակերպման մարտահրավերները մեծ տվյալների (Big Data) տեխնոլոգիական արդի շրջանում, *Տարածաշրջան և աշխարհ գիտավերլուծական հանդես*, 2020, №5, 35-45:

АРУТЮНЯН ЖАННА ПЕТРОСОВНА

ТЕХНОЛОГИИ БОЛЬШИХ ДАННЫХ (BIG DATA) В СОВРЕМЕННЫХ ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССАХ И ВОЗМОЖНОСТИ ИХ ПРИМЕНЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”. Защита диссертации состоится 4-ого декабря 2026 г. в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА
(адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию роли технологий больших данных (big data) в современных политических процессах и анализу возможностей их применения в условиях цифровой трансформации Республики Армения.

Работа состоит из введения, трёх глав, заключения и предложений, списка использованной литературы и приложения. Во введении обосновывается актуальность темы исследования, анализируется степень её научной разработанности, определяются объект и предмет исследования, формулируются цель и задачи работы, раскрываются научная новизна, теоретическая и практическая значимость исследования.

Целью диссертационной работы является анализ роли технологий больших данных в современных политических процессах, выявление возможностей и ограничений их применения в контексте современных тенденций цифровизации Армении, институциональных препятствий и стратегических вызовов, а также формулирование основополагающих принципов совершенствования политики в направлении управления, основанного на данных.

Актуальность исследования обусловлена стремительным развитием информационно-коммуникационных технологий и возрастающим значением данных как стратегического ресурса государственного управления. В условиях Четвёртой промышленной революции большие данные оказывают всё более значительное влияние на процессы принятия политических решений, деятельность государственных институтов, взаимодействие власти и общества, а также на развитие демократических механизмов участия граждан. При этом в армянском научном пространстве политические аспекты применения больших данных остаются недостаточно изученными.

В первой главе диссертации, озаглавленной **«Теоретические основы политических процессов и принятия решений»**, исследуются сущность, особенности и этапы политических процессов, рассматривается процесс принятия политических решений как ключевой элемент политического управления. Особое внимание уделяется теоретическим предпосылкам управления на основе данных, роли больших данных в политическом анализе и концепции «датакратии» как новой формы организации политического управления в цифровую эпоху.

Во второй главе диссертации, озаглавленной **«Роль больших данных в современных политических процессах»**, раскрываются теоретические основы

концепции больших данных, их ключевые характеристики, преимущества и риски. Анализируется влияние больших данных на политические процессы и государственное управление, рассматриваются концепции нового цифрового общественного договора и «дополненной демократии», а также исследуются условия формирования совместимой и эффективной экосистемы данных.

В третьей главе диссертации, озаглавленной **«Институциональные и практические проявления больших данных в политических процессах Республики Армения: возможности, ограничения и направления развития»**, анализируются текущее состояние цифровой трансформации в Республике Армения, институциональные возможности и существующие ограничения применения больших данных. Рассматриваются вопросы межведомственного взаимодействия, цифровой инфраструктуры, кибербезопасности и перспективы внедрения механизмов дата-ориентированного управления в политические процессы страны.

Научная новизна исследования заключается в комплексном анализе возможностей применения больших данных в политических процессах Республики Армения. В работе раскрыты политические и институциональные аспекты использования больших данных, предложены концептуальные подходы к развитию дата-ориентированного управления, цифрового общественного участия и совершенствованию механизмов принятия политических решений.

В заключении обобщаются результаты исследования и делается вывод о том, что эффективное использование больших данных способно повысить качество государственного управления, обеспечить большую прозрачность и подотчётность политических институтов, расширить участие граждан в политической жизни и укрепить общественное доверие. Вместе с тем подчёркивается необходимость совершенствования правового регулирования, обеспечения кибербезопасности, защиты персональных данных, развития цифровой грамотности и создания национальной инфраструктуры управления данными. Результаты исследования имеют как теоретическое, так и практическое значение и могут быть использованы при разработке стратегий цифровой трансформации, совершенствовании механизмов электронного управления и формировании в Республике Армения современной системы принятия решений на основе данных.

HARUTYUNYAN ZHANNA PETROSI

BIG DATA TECHNOLOGIES IN CONTEMPORARY POLITICAL PROCESSES AND OPPORTUNITIES FOR THEIR APPLICATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation under 23.00.02 "Political Institutions and Processes," aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on December 4, 2026, at 14:00 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

SUMMARY

The dissertation examines the role of big data technologies in contemporary political processes and analyzes their potential applications within the context of the digital transformation of the Republic of Armenia.

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion and recommendations, a bibliography, and an appendix. The introduction establishes the relevance of the research topic, reviews the existing scholarly literature, defines the object and subject of the study, formulates its aim and objectives, and outlines the scientific novelty, as well as the theoretical and practical significance of the research.

The primary objective of the dissertation is to analyze the role of big data technologies in contemporary political processes, identify the opportunities and limitations associated with their application in light of Armenia's ongoing digitalization efforts, institutional constraints, and strategic challenges, and formulate foundational principles for the advancement of data-driven governance.

The relevance of the study stems from the rapid development of information and communication technologies and the increasing importance of data as a strategic resource for public governance. Within the framework of the Fourth Industrial Revolution, big data is exerting a growing influence on political decision-making processes, the functioning of public institutions, interactions between the state and society, and the development of democratic mechanisms for citizen participation. Despite these developments, the political dimensions of big data applications remain insufficiently explored in Armenian academic and policy discourse.

Chapter One, **"Theoretical Foundations of Political Processes and Decision-Making,"** examines the nature, characteristics, and stages of political processes and explores political decision-making as a central component of governance. Particular attention is devoted to the theoretical foundations of data-driven governance, the role of big data in political analysis, and the concept of *"datacracy"* as an emerging model of political organization in the digital era.

Chapter Two, **"The Role of Big Data in Contemporary Political Processes,"** presents the theoretical underpinnings of the big data paradigm and examines its principal characteristics, benefits, and associated risks. The chapter analyzes the impact of big data on political processes and public governance, reviews the concepts of the new digital social contract and *"augmented democracy"*, and investigates the conditions necessary for the development of an interoperable, sustainable, and effective data ecosystem.

Chapter Three, **"Institutional and Practical Manifestations of Big Data in the Political Processes of the Republic of Armenia: Opportunities, Limitations, and Future Directions,"** evaluates the current state of digital transformation in Armenia and assesses both the institutional capacities and the existing challenges related to the adoption of big data technologies. The chapter further examines issues of interagency coordination, digital infrastructure, cybersecurity, and the prospects for integrating data-driven governance mechanisms into the country's political and administrative processes.

The scientific novelty of the dissertation lies in its comprehensive examination of the potential applications of big data within the political processes of the Republic of Armenia. The study identifies the political and institutional dimensions of big data utilization and proposes conceptual approaches for strengthening data-driven governance, enhancing digital civic participation, and improving political decision-making mechanisms.

In conclusion, the dissertation synthesizes the findings of the research and demonstrates that the effective use of big data can significantly enhance the quality of public governance, improve the transparency and accountability of political institutions, broaden citizen participation in political life, and strengthen public trust. At the same time, the study underscores the importance of strengthening legal and regulatory frameworks, ensuring cybersecurity, safeguarding personal data, promoting digital literacy, and developing a comprehensive national data governance infrastructure. The findings possess both theoretical and practical value and may contribute to the formulation of digital transformation strategies, the advancement of e-governance systems, and the establishment of a modern data-driven decision-making framework in the Republic of Armenia.

